



Համարը N 1442-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2012.11.28/58(932)
Հոդ. 1247

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 08.12.2012

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 15.11.2012
Ստորագրման ամսաթիվը 21.11.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ (ԿԱՍ) ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(որոշումը խմբ. 18.05.17 N 519-Ն)

15 նոյեմբերի 2012 թվականի N 1442-Ն

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ (ԿԱՍ) ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 18.05.17 N 519-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից սահմանված և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալների և ձևերի:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2012 թ. նոյեմբերի 21
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
նոյեմբերի 15-ի N 1442-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ (ԿԱՄ) ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (վերնագիրը խմբ. 18.05.17 N 519-Ն)

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակներում, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման գործընթացը:

2. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կառավարումն ու շահագործումն իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, սույն կարգի և այլ իրավական ակտերի:

3. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ յուրաքանչյուր տեսակի կապուղիների առաջնահերթ օգտագործման իրավունք ունեն` ըստ հաջորդականության` Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը և Հայաստանի Հանրապետության մարզպետարանները:

4. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ կապի ցանցերը և կապի միջոցներն առաջնահերթ օգտագործվում են արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման, փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման, պետության պաշտպանվածության, անվտանգության, ինչպես նաև իրավակարգի պահպանման միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ բոլոր էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կառավարումն ու շահագործումն ապահովելու նպատակով նախապատասխան շրջանում իրականացվող միջոցառումներն են`

- 1) էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և համակարգերի կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու համակարգումը.
- 2) էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը տիրապետող մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիության ապահովումը:
- 6. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից իրականացվող միջոցառումներն են`

- 1) էլեկտրոնային հաղորդակցության կապուղիների տրամադրումը` համաձայն սույն կարգի 3-րդ կետում նշված առաջնահերթության սկզբունքի.
- 2) օպերատորների կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիության ապահովումը.
- 3) վթարավերականգնողական աշխատանքների օպերատիվ կազմակերպումը:

7. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և (կամ) Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված հայտերի հիման վրա, հաշվի առնելով սույն կարգի 3-րդ կետում նշված առաջնահերթության սկզբունքը, կապուղիների առանձնացումը և տրամադրումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն մուտքագրվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

8. Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ներկայացված հայտերին համապատասխան:

9. Հայտը ներառում է այն վայրը, որն անհրաժեշտ է ապահովել կապով, նշելով հասցեն, կամ աշխարհագրական կոորդինատները, պահանջվող կապի տեսակը և աշխատանքների իրականացման ժամանակահատվածը:

10. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից ներկայացված հայտն ստանալուց հետո 6 ժամվա ընթացքում այն ուղարկում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորներին` հայտում

նշված վայրում կապի ապահովման համար տեխնիկական հնարավորությունների և այդ աշխատանքների իրականացման նպատակով պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

11. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը սույն կարգի 10-րդ կետով պահանջվող տեղեկատվությունն էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորներից ստանալուց հետո ամփոփում և հնարավորինս սեղմ ժամկետում համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որից հետո պատվիրում է համապատասխան օպերատորին՝ իրականացնելու հայտում նշված վայրում կապի ապահովման աշխատանքները:

12. Սույն կարգի 11-րդ կետում նշված աշխատանքներն ավարտելուց հետո կազմվում է ընդունման-հանձնման ակտ, և ակտի մեկ օրինակը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված ընդունման և հանձնման ակտը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն մուտք լինելուց հետո 1-օրյա ժամկետում դրա պատճենը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

14. Համագործակցությունը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և օպերատորների միջև իրականացվում է երկկողմանի համաձայնագրերով կամ պայմանագրային հիմունքներով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

15. Սույն կարգի պահանջների համաձայն էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի, տեխնիկական միջոցների օգտագործման դիմաց հասցված իրական վնասը և բաց թողնված օգուտի փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

(հավելվածը լրաց., փոփ. 12.06.14 N 615-Ն, խմբ. 18.05.17 N 519-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան